# ԱԶԴԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE أزتاك جريدة يومية سياسية وأدبية - المديرة المسؤولة، إيبا دَرويشيان

1500 Լ.Ո. 75ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 120 (21170) ՀԻՆԳՇԱԲԹԻ, 1 ՕԳՈՍՏՈՍ 2002 10 ԷՋ


ՀԱԿԱՌԱԿ ԷՃԵՒԻԹԻ ԿԱՄՔԻՆ

## ԹՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՈՐԴԵԳՐԵՑ ՆՈՅԵՄԲԵՐ 3Ը ԿԱՆԽԱՀԱՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԻԲՐԵՒ ԹՈՒԱԿԱՆ

*Հակառակ Թուրքիոյ վարչապետ Պիւլէնթ Էճեւիթի կամքին, թրքական խորհրդարանը երէկ որդեգրեց Նոյեմբեր 3ին կանխահաս ընտրութիւններ կայացնելու առաջարկը: Խորհրդարանը այս շաբաթ իր արձակուրդէն վերադարձած էր՝ կարեւոր այս նիստին համար: Այսպէսով, Էճեւիթ ճակատամարտ մը կորսնցուց կառավարական ընկերակցութեան իր դաշնակիցներուն դէմ: Ան կանխահաս ընտրութիւնները երկրին տնտեսութեան համար մեծ հարուած կը նկատէ, ինչպէս նաեւ խլամական ծայրայեղական խմբակցութիւններու եւ քիւրտ անջատողականներու համար լաւ առիթ մը՝ «խլրտելու»:*

(ՌՈՅԹԸՐԶ)

# ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՈՃԻՐ. 8 ԶՈՀ, 5 ՎԻՐԱՒՈՐ

Լիբանանի մէջ աննախընթաց ողբերգութիւն մը պատահեցաւ երէկ, երբ Քորնիշ Մազրաայի մէջ պետական պաշտօնեայ մը սպաննեց ութ պաշտօնակիցներ եւ վիրաւորեց հինգ ուրիշներ:

Արդարեւ, կրթութեան նախարարութեան պատկանող սեփական վարժարաններու ուսուցիչներու հատուցումներու անտուկի պաշտօնեայ մը՝ Աhմէտ Ալի Մանսուր, 45 տարեկան, հարաւի Լուպիա գիւղէն, երէկ առաւօտեան ժամը 10:30ին գնդացիրով մուտք գործեց իր գրասենեակը եւ կրակ բացաւ իր պաշտօնակիցներուն վրայ: Ներքին ապահովութեան ուժերը ձերբակալեցին յանցագործը եւ զայն փոխադրեցին Ռամլէթ Պայտայի ոստիկանատուն:

Արարքին վոհ գացին անտուկի նախագահ եւ տնօրէն Ռաշէլ Ռաիմէ–Սաատէ, Իվէթ Ֆըղալի (սեփական վարժարաններու սենտիքայի խորհուրդի անդամ), Մուսա Շուէյրի (կրթութեան նախարարութեան բաժանմունքի պետ) եւ անտուկի պաշտօնեաներ Քարլոս Սալամէ, Մարիա Թապէթ, Մարուն Մուսա, Սալման Ժամուս եւ Սուքայնա Հարքուս: Վիրաւորուեցան Ամինա Զէյն, Սամար Մուսա, Մահաֆարշուխ Եոլա Սալամէ եւ Ապտէլ Ռահման Միքաթի:



Ջոհերէն մէկը, որ սպաննուած էր պատշգամը

### ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ականատեսներ ըսին, որ Մանսուր *թաքսի*ով ժամանեց ԵՈՒՆԵՍՔՕի մօտ գտնուող անտուկի կեդրոնատեղին. պայուսակի մը մէջ ան իրեն հետ բերած էր «*Քալաշնիքով*» գնդացիր մը, փոքր գնդացիր մը, ատրճանակ մը եւ ձեռնառումբ մը: Շէնքին երրորդ յարկը գտնուող անտուկի գրասենեակներէն ան առաջին հերթին մտաւ անտուկի նախագահ–տնօրէն Ռաշէլ Ռաիմէ Սաատէի գրասենեակը եւ զայն սպաննելէ ետք դուրս եկաւ եւ կուրօրէն կրակ բացաւ իր պաշտօնակիցներուն վրայ:

Լրատուական աղբիւրներ հաղորդեցին, որ Մանսուր 18 միլիոն լ. ոսկիի փոխառութիւն ստացած էր եւ զայն պիտի վճարէր՝ կեղչելով գումարը իր գործէ դադրելու հատուցումէն: Փոխառութենէն ետք, ան երրորդ անձ մը լիազօրած է գանձելու իր հատուցումը, եւ երբ անտուկի տնօրէնութիւնը իմացած է, Մանսուրէն պահանջած է պարտքը վճարել Երեքշաբթի օր. ան խոստացած է գումարը բերել երէկ:

Նոյն աղբիւրներուն համաձայն, Մանսուր պայուսակին մէջ գումարին տեղ բերած է «*Քալաշնիքով*» մը, «*Զիկ*» տիպի փոքր գնդացիր մը, «*Հէրսթալ*» ատրճանակ մը, զորս գործածեց իր պաշտօնակիցներուն դէմ:

Լրատուական աղբիւրներու հաղորդած տեղեկութիւններուն համաձայն՝ կրակոցի ձայնին եւ անցորդներու պոռչտուքներուն վրայ՝ ներքին ապահովութեան ուժերու ջոկատ մը անմիջապէս ժամանեց դէպքին վայրը. ոճրագործը անտուկի կեդրոնատեղիէն, երրորդ յարկի պատուհաններէն եւ պատշգամներէն սկսաւ կրակել անոնց ուղղութեամբ:

Ապա, կէնքերը գրասենեակներէն մէկուն մէջ կոկիկ ձեւով շարելով, ծխախոտ մը վառած, ան դուրս եկաւ շէնքէն, որուն մուտքին կը գտնուէին ոստիկաններ, որոնք հարցուցին եղելութեան մասին. ան պատասխանեց, որ կրակոց լսած է եւ չի գիտեր, թէ ի՞նչ պատահած է: Եւ երբ ան փախուստի փորձ կատարած է, ձերբակալուած է, հաղորդեցին նոյն աղբիւրները:

Սամար Մուսանի, որ մազապուրծ փրկուած էր ոճրագործին կրակոցէն, ըսաւ. «Տեսայ զինք, երբ մտաւ գրասենեակ. ան գնդացիր ունէր եւ բոլորիս կը փնտռէր սենեակներուն մէջ,



Ներքին Ապահովութեան Ուժեր՝ դէպքին վայրը

Շար.ը՝ էջ 2

ԱԿՆԱՐԿ

## ՀԶՕՐ ԲԱՆԱԿ ԵՒ ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅՐԵՆԻՔ




*1 Օգոստոսը համալիբանանեան տարողութիւն ունեցող թուական է: Անիկա կը խորհրդանշէ լիբանանեան բանակին տօնը: Ազգային տօն, որ իր խորհուրդին շուրջ կը համախմբէ լիբանանեան հասարակարգը յատկանշող եւ այս երկիրը բաղկացնող բոլոր համայնքները:*

*Կուռ, կարգապահ ու հզօր բանակը երկիրներու եւ պետութիւններու համար նախապայման է անդորր սահմանապահութեան, անվտանգ հայրենիքի բարգաւաճման, ժողովուրդի ապահովութեան հաստատման երաշխաւորման եւ կանաչան մակարդակի ոտնձգութիւններու կանխարգիլման:*

*Քաղաքական եւ վինուորական պատասխանատուութիւններու, լիազօրութիւններու կամ իրաւասութիւններու ճշգրիտ սահմանազատումը աւելի քան անհրաժեշտ է տուեալ պետութեան կամ ընդհանրապէս հասարակարգերու ղեկավարման գործընթացին համար: Զինուորական ուժը կամ բանակային համակարգը կոչուած են ապահովելու հայրենիքին անկախութիւնն ու գերիշխանութիւնը, ինչպէս նաեւ՝ քաղաքացիներուն ապատ ու անկաշկանդ ապրելու ազգային հիմնական իրաւունքները:*

*Իր կոչումին տէրը եղող լիբանանեան բանակը իր շարքերուն եւ հրամանատարական կազմերուն մէջ ներառած է այս երկրի քաղաքացիներուն բոլոր հատուածները: Լիբանանեան միասնականութեան խորհրդանիշ այս հաստատութեան մէջ կայ համայնքային արդար համակեցութիւն եւ ի խնդիր այս հայրենիքին ծառայելու համատարած պատրաստակամութիւն:*

*Գիտակցական ա՛յս մօտեցումով Լիբանան պիտի շարունակէ դէմ դնել թշնամի Իսրայէլի ոտնձգութիւններուն, ամուր պահել իր սահմանները եւ պահպանել երկրին գերիշխանութիւնը:*

*Բարգաւաճ են հայրենիքները, երբ կուռ ու կարգապահ են անոնց բանակներուն շարքերը, երբ սահմանազատուած են քաղաքական ու վինուորական մարզերու գործադաշտերն ու համապատասխան լիազօրութիւնները, բայց մանաւանդ՝ բանակայիններուն մօտ առկայ է հայրենիքին ծառայելու անսակարկ նուիրումը:*

«Ա.»

## ՄԱԿ ԿԸ ՄԻՋԱՄՏԷ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԵՐՈՒ ԳՐԱՒՄԱՆ ՀԱՐՑԻՆ

Եւրոպայի Հայ Դատի Գրասենեակը հաղորդագրութեամբ մը տեղեկացուց, որ կրօնի ազատութեան հարցերու առնչութեամբ ՄԱԿի բարձրաստիճան պաշտօնատար Ա. Ամոր պաշտօնական դիմում ներկայացուցած է ՄԱԿի մէջ Իսրայէլի դեսպանին, իսրայէլեան բանակին կողմէ Երուսաղէմի հայոց պատրիարքութեան պատկանող «Պարոն Տէր» (Բեթղեհէմ) կալուածի գրաւման հարցով:

Եւրոպայի Հայ Դատի Գրասենեակի ատենապետ Հիլտա Չոպոյեան Ա. Ամորի կեցուածքին գծով ըսաւ. «Պրն. Ամոր պաշտօնական դիմում կատարեց Իսրայէլի, անոր իշխանութիւններէն պահանջելով տեղեկութիւն փոխանցել իսրայէլեան բանակի կողմէ հայկական եկեղեցւոյ սեփականութեան գրաւման մասին: Դիմումին մէջ, ՄԱԿի յատուկ վեկուցողը Իսրայէլէն պահանջեց մնալ միջազգային օրէնքի սահմաններէն ներս»: Ամոր այս քայլին դիմած է հիմնուելով հակամարտութեանց լուծման «Քովքաս» կեդրոնի տեղեկատուութեան վրայ: Նշեալ կեդրոնը պատրիարքութեան հողատարածքի բռնագրաւումէն անմիջապէս ետք ձեռնարկած էր ՄԱԿի մարդկային իրաւանց պատկան մարմինները տեղեակ պահելու աշխատանքին, «արգիլելու համար հայկական համայնքի իրաւունքներու հանդէպ վնասներ հասցնելը»:

Չոպոյեան տեղեկացուց, որ Ա. Ամոր անկախ փորձագէտ մըն է, որուն տեսակէտները հեռու են քաղաքական նկատառումներէ: «Այսուհանդերձ, մենք մտահոգ ենք Երուսաղէմի հայոց պատրիարքութեան հողերու գրաւման ի տես: Այս խախտումը մտահոգիչ յարձակում մըն է սրբավայրերուն մէջ հայութեան հազարամեայ ներկայութեան դէմ», ըսաւ Չոպոյեան:

Ա. Ամոր կը մտադրէ Իսրայէլ մեկնիլ, մօտէն հետեւելու համար հայապատկան հողերու գրաւման հարցին:

● ԵՐՈՒՍԱՂԷՄԻ հայոց պատրիարքարանի փաստաբան Մազէն Քոպթի ԱՖՓի յայտնած է, որ պատրիարքութիւնը Երեքշաբթի օր դիմած է Իսրայէլի գերագոյն դատարանին, իսրայէլեան բանակը ամբաստանելով պատրիարքարանի հողերու գրաւման յանցանքով:

ԸՍՏ ՄԱԿԻ ՄԷԿ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՅԼ ԵՐԿԻՐՆԵՐ ԱՊԱՍՏԱՆ ԽՆԴՐՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒ ԹԻՒԸ 19 ՏՈԿՈՍՈՎ ՆՈՒԱԶԱԾ Է

*Աւստրիական իրաւապահ մարմիններ վերջերս ձերբակալած են ապօրինի ձեւով Աւստրիա մուտք գործել փորձող յիսուն գաղթականներ, որոնցմէ 23ը հայեր են: Ձերբակալուածներուն մէջ կան հնդիկներ, վրացիներ, սուտանցիներ, թուրք մը եւ ուքրանացի մը: Ապաստան ստանալու յոյսով այս տարի աւստրիական կառավարութեան դիմած են աւելի քան 1000 հայաստանցիներ:*

*Միաժամանակ, ՄԱԿ երէկ հրապարակեց վիճակագրութիւն մը, ըստ որուն՝ 19 տոկոսով նուազած է հայաստանցի այն քաղաքացիներու թիւը, որոնք ապաստան կը խնդրեն օտար կառավարութիւններէ: Ասիկա կը նկատուի աննախընթաց յաջողութիւն մը նախկին Խորհրդային Միութեան անդամ երկրի մը համար, որովհետեւ ապաստանեալի դիմում ներկայացնողներու թիւի միայն 2 առ հարիւր նուազում արձանագրուած է Ռուսիոյ մէջ, իսկ կացութիւնը շատ աւելի վատ է ԱՊՀի անդամ այլ երկիրներու մէջ:*

*Այս տարուան առաջին 5 ամիսներու տուեալներով, ապաստան ստանալու համար տարբեր երկիրներու դիմած են շուրջ 4 հազար հայաստանցիներ: Դիմողներու մեծ մասը կը նախընտրէ Աւստրիան:*

## ԲԱՆԱԿԻ ՏՕՆԸ ԱՄԲՈՂՋ ԼԻԲԱՆԱՆԻ ՏՕՆՆ Է

### Կ'ԸՍԷ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

*Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց բանակի մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ բանակի ընդհանուր հրամանատար զօր. Միշէլ Սլէյմանի: Պատուիրակութիւնը լիբանանեան բանակի հիմնադրութեան 57ամեակին առիթով շնորհաւորութիւնները փոխանցեց նախագահ Լահուտի: Նախագահ Լահուտ, իր կարգին, շնորհաւորեց զօրավարները՝ դրուատելով անոնց զոհողութիւնները եւ վերահաստատելով, որ բանակի տօնը ամբողջ Լիբանանի տօնն է:*

*Զօր. Սլէյման, իր կարգին, վեր առաւ նախագահ Լահուտի կեցուածքները եւ ազգային հիմքերը պաշտպանող անոր որոշումները, ըլլան անոնք բանակին մէջ ամբողջ ինը տարի, թէ նախագահական տարիներուն:*

## ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՈՃԻՐ...

Շարունակուած Ա. էջէն

պատշգամները, ամէն տեղ. ես պահուըտեցայ, ապա յաջողեցայ խոյս տալ»:

Այլ պաշտօնեայ մը ըսաւ. «Ոտքերուն իյնալով՝ կանոնք համբուրեցի եւ աղաչեցի, որ չսպաննէ զիս, որովհետեւ փոքրիկ աղջիկս հետս է. ան ըսաւ գնա՛, պիտի չսպաննեմ քեզ, բայց սպաննեց պաշտօնակիցս...»:

### ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐ

Պէյրութի ընդհանուր դատախազ Ժոզէֆ Մաամարի յետ հարցաքննութեան ամբաստանագիր մը ուղղեց Ահմէտ Ալի Մանսուրի, որ հարցաքննութեան ընթացքին խոստովանեցաւ իր յանցանքը:

Ամբաստանագիրը կ'ըսէ, որ ամբաստանեալը երէկ Պէյրութի մէջ դիտումնաւոր, կանխամտածուած եւ նախօրօք ծրագրուած ձեւով սպաննեց ութ հոգի եւ փորձեց սպաննել չորս ուրիշներ, անոնց վրայ կրակ բանալով. անոր գործածած զէնքերը առանց արտօնագիրի էին, ինչպէս նաեւ ան ձեռնառումբ ունէր:

Այս յանցանքներուն օրէնքի սահմանած պատիժը մինչեւ մահապատիժի կը հասնի:

Ընդհանուր դատախազ Մաամարի հրամայեց արգելափակել յանցագործը եւ ամբաստանագիրը փոխանցեց Պէյրութի աւագ քննիչ դատախազ Հաթէմ Մատիի:

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ ամբողջ օրը հետեւեցաւ դատական հետաքննութեան արդիւնքներուն: Ան պահանջեց փութացնել կանոնք եւ յայտնաբերել քստմնելի ոճիրին բոլոր մանրամասնութիւնները եւ կանոնք հաղորդել ժողովուրդին ու հանրային կարծիքին: Վերջապէս, նախագահը պահանջեց ծանրագոյն պատիժին ենթարկել ոճրագործը:

### ԴԱՏԱԽԱԶ ՄԱՏԻ. *ՊԻՏԻ ՊԱՏԺՈՒԻՆ ԱՆՈՆՔ, ՈՐՈՆՔ ՏԱՐԲԵՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՆ*

Պէյրութի աւագ քննիչ դատախազ Հաթէմ Մատի հաւաստեց, որ այս ոճիրին դրդապատճառները զուտ անձնական են:

Ան ըսաւ, որ արդէն սկսած է հետաքննութեան եւ այսօր յետմիջօրէին պիտի լսէ վիրաւորներու վկայութիւնները:

Հետաքննութիւնը գլխաւորելու համար դէպքին վայրը այցելած միջոցին, Մատի ըսաւ, որ ոճիրը բացի նիւթականէ այլ դրդապատճառ չունի «եւ ամէն կողմ կամ անձ, որ տարբեր մեկնաբանութիւն կու տայ հարցին՝ ինքզինք քրէական յանցանքի համար հետապնդումի վտանգի տակ կը դնէ, որովհետեւ խանգարած պիտի ըլլայ հետաքննութեան ընթացքը»:

### ԶՕՐ. ՔԼԷՅԼԱԹ. *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՃԻՐ ՉԷ*

Պէյրութի ոստիկան ուժերու հրամանատար զօր. Ուալիտ Քլէյլաթ դէպքին վայրը այցելեց եւ ստուգումներ կատարեց, ապա թղթակիցներու հարցումներուն պատասխանելով, հաստատեց, որ ոճիրը կանխամտածուած էր:

«Զոհերը մէկ համայնքէ չեն, ոճիրին դրդապատճառը քանիհինգ տարիէ ի վեր միասին աշխատող պաշտօնակիցներու միջեւ անձնական ողբերգական հարց մըն է», ըսաւ ան, եւ յայտնեց, որ յանցագործը պաշտօնէն պիտի հրաժարէր եւ հատուցումներ պիտի ստանար, բայց ծանր պարտքերու տակ էր:

Զօր. Քլէյլաթ մաղթեց, որ այս դէպքին բացի անձնականէն այլ բնութագրում չտրուի:

### Ն. Ա. ՈՒԺԵՐՈՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ներքին ապահովութեան ուժերը հրապարակեցին հաղորդագրութիւն մը, որուն մէջ յայտ

Շար.ը՝ էջ 3

*ԲՋԻՋԱՅԻՆԻ ՀԱՐՑԻՆ ԳԾՈՎ*
*ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԱՊԷՍ ԿԸ ՅԱՄԵՆԱՅ*

## ՊԱԱՊՏԱ - ՔԸՐԱՅԹԷՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻԾԻՆ ՎՐԱՅ՝ ԱՇԽՈՅԺ ԵՌՈՒԶԵՌ



Քըրայթէմի հանդիպումէն

Քըրայթէմի իր ապարանքին մէջ, վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ գումարեց ժողով մը, որուն ներկայ էին ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըր, տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի, հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան-Լուի Քըրտահի եւ երեսփոխան Ալի Հասան Խալիլ:

Ժողովին քննարկուեցան բջիջային հեռաձայնի հաստատութիւններու ապապետականացման հարցին լուծում ապահովելու կէտեր, հաղորդեց վարչապետին լրատու գրասենեակը:

Ժողովէն ետք վարչապետ Հարիրի երեսփոխան Խալիլի ընկերակցութեամբ ուղղուեցաւ խորհրդարան՝ հանդիպելու համար խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի: Հանդիպումէն ետք, Պըրրի եւ հաղորդակցութեանց միջոցներու նախարար Քըրտահի բարձրացան Պաապտայի ապարանք եւ տեսակցեցան նախագահ զօր. Էմիլ Լահուտի հետ:



Լահուտ - Պըրրի - Քըրտահի

Ան ոչ մէկ յայտարարութիւն կատարեց հանդիպումին մասին եւ բաւարարուեցաւ ըսելով. «Վերջը կը խօսինք»:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի: Քննարկուեցան տեղական ներքին բեմը յուզող շարք մը հարցեր:

### Կ'ՈՒԶՈՒԻՆ

●Վարպետ ոսկերիչներ (*սետեըր*): Հեռ. 01 - 268361:

### ԲԱԽՏԱՒՈՐՈՒԱԾ

Տէր եւ տիկին
Տիրան եւ Քարոլ
Ֆերեշէթլեան
բախտաւորուած
են
առջինեկ՝ մանչ
զաւակով մը՝
ԷՏՈՒԱՐՏՕ
31 Յուլիս 2002
Պէյրութ

Հ.Բ.Ը.Մ. ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

**2002-2003 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ**

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան (Նիկոսիա - Կիպրոս), 2002-2003 տարեշրջանի մուտքի քննութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 9 Օգոստոս 2002, կէսօրէ առաջ ժամը 8:30ին, միութեանս Ե. եւ Ա. Տեմիրճեան կեդրոն - Անթիլիաս, 3րդ յարկ. հեռ. 04/522842:

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին Մելգոնեան Կրթական Հաստատութեան դիմել, պարտին նախքան քննութիւնները դիմումնագիր լեցնել:

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՃԱՇԿԵՐՈՅԹ**

●Գեղարուեստական ճոխ յայտագիր

Տեղի կ'ունենայ Կիրակի, 11 Օգոստոս 2002ի կէսօրուան ժամը 12:00էն սկսեալ, JEDOUDNA ճաշարանին մէջ, Պէյթ Մերիի մայրուղիին վրայ:

Տոմսերը կարելի է ստանալ «Լ. Շանթ» կեդրոնէն, Պուրճ Համուտ, հեռ. 01-265899 եւ 249375:

Հ. Յ. Դ. *ԼԵՄ*Ի «Ա. ՇԻՐԱԿԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒՂ

*ԱՐՇԱՒԻՐ ՇԻՐԱԿԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿ*

*Կը բանախօսէ՝*
**ԸՆԿ. ԵՍԱՅԻ ՀԱՒԱԹԵԱՆ**

❖Գեղարուեստական յայտագիր

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 2 Օգոստոս 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

*ՀՐԱՒԷՐ*

## *ԲԱՆԱԿԻ ՏՕՆԸ ՆՇՈՒԵՑԱՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ*

*Լիբանանի տարբեր շրջաններու մէջ լիբանանեան բանակի հիմնադրութեան 57ամեակին առիթով տեղի ունեցան զինուորական տարբեր տօնակատարութիւններ, որոնց ընթացքին ընթերցուեցաւ բանակի ընդհանուր հրամանատար զօր. Միշէլ Սլէյմանի «Օրուան Հրամանը»:*

*Շրջաններուն մէջ բարձրացան նաեւ նախագահ զօր. Էմիլ Լահուտի նկարները, լիբանանեան դրօշակներ, ինչպէս նաեւ Լիբանանի ապահովութեան ու կայունութեան մէջ բանակին անհրաժեշտ դերը շեշտող լոզունգներ կրող որմազդներ:*

*Զինուորական տօնակատարութիւններ տեղի ունեցան Սայտայի մէջ, ներկայութեամբ զօր. Սլէյմանի ներկայացուցիչ զօր. Սլէյման Ապու Ռըզքի, կենսոլորտի նախարար Միշէլ Մուսայի եւ շարք մը երեսփոխաններու, ինչպէս նաեւ քաղաքական, ընկերային եւ կրօնական բազմաթիւ անձնաւորութիւններու:*

*Տօնակատարութենէն առաջ ծաղկեպսակի զետեղում կատարուեցաւ Անյայտ Զինուորի յուշարձանին առջեւ եւ տեղի ունեցան զինուորական ցուցադրութիւններ:*

*Նոյնանման ձեռնարկներ կատարուեցան նաեւ Պեքաայի, Ժունիէի, Աքքարի, Հիւսիսի, Քեսրուանի, Պաթրունի եւ Սուրի մէջ:*

*Բանակի հիմնադրութեան 57ամեակին առիթով իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին պետական անձնաւորութիւններ, քաղաքապետութիւններ, միութիւններ եւ կազմակերպութիւններ:*

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

*●ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ողջունեց Լիբանանի մէջ մոթոքրոսի ախոյեանութիւն կազմակերպելու գաղափարը:*

*Յովնանեան շեշտեց, որ մարզական այս աննախընթաց ախոյեանութիւնը, այլ մրցաշարքերու կողքին, ապացոյց մըն է Լիբանանի մարզական բնագաւառին առողջութեան եւ կը բացայայտէ լիբանանցիին նախանձախնդրութիւնը հետեւելու համաշխարհային մարզական անցուդարձերուն:*

●ՉԱՏԻ վարչապետ Հարուն Քապատի երէկ կէսօրէ առաջ ժամը 11:00ին Լիբանանէն մեկնեցաւ:

Լիբանան իր պաշտօնական այցելութիւնը աւարտած վարչապետ Քապատիի ճամբելու համար օդակայան ուղղուեցան վարչապետ Ռաֆիք Հարիրի, արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ, մշակոյթի նախարար Ղասսան Սալամէ եւ Լիբանանի ու Եգիպտոսի մէջ Չատի դեսպան Ամին Ապա Սըտտիք:

*●ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիհ Պըրրի երէկ ընդունեց պետական նախարար Նայիհ Պայտունը, որուն հետ քննարկեց բջիջային հեռաձայնի ապապետականացման գործընթացին առնչուած հարցեր:*

*Պըրրիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Մոլտաւիոյ նոր դեսպան Վիքթոր Թվիրքոմը, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ Չեխիոյ դեսպան Էվա Ֆիլիփին, որուն այցելութիւնը հրաժեշտի էր:*

**ՇՐՋԱՊՏՈՅՏ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ** *ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ*

♦Օգոստոս 9-16 Հայաստան լման պտոյտներով՝ 650 $

♦Օգոստոս 9-23 Հայաստան լման պտոյտներով՝ 825 $

♦Օգոստոս 23 - Սեպտեմբեր 6 Հայաստան, Ա. կարգի հիւրանոց եւ բացառիկ յայտագիր, Ջերմուկ, Սեւան, Ծաղկաձոր, Դիլիջան, պարահանդէս. գին՝ 850 $, իսկ թռիչքները Հալէպէն, բոլոր գիներու վրայ 75 $ նուազ + օդակայանի տուրքը ձրի:

●Սեպտեմբեր 6-10 ԿԻՊՐՈՍ գինիի փառատօնին առիթով. լման պտոյտներով Լիմասոլ, Այանափա, Նիկոսիա, Լառնաքա. գին միայն 270 $ եւ հինգ աստղանի շքեղ պանդոկ 385 $

●Մէկ շաբաթ Վառնա 285 $, մէկ շաբաթ Եալթա 540 $, մէկ շաբաթ յունական կղզիներ Calypso նաւով ամէն գիշեր խրախճանք լման ճաշերով, գին՝ 450 $

●Ամէն Ուրբաթ 3 օր Լաթաքիա, հինգ աստղանի պանդոկ 85 $

●Ամէն Կիրակի Դամասկոս - Սէտնայա 13 $

●Կիպրոս երթուդարձ արագ նաւով 65 $

■Ս. Աստուածածնայ տօնին առիթով եռօրեայ շրջապտոյտ - ուխտագնացութիւն դէպի Պանիաս, Լաթաքիա, Քեսապ, պտոյտներ 69 $, մեկնում 16 Օգոստոս:

*ԱՃԾԵԱՆ ԹՈՒՐԶ 01-261177, 01-240654 եւ 03-233978:*

Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ ԿԱՄ Կ'ԸՆԵՆ

**ՓՕԼԻԿԼՕԹ**

ՔՈԼԷՃԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԸ

«...Աւարտելէ ետք Փօլիկլօթի «*Ինթիրիըր Տիզայն*»ի դասընթացքը, ընդունուեցայ Քանատայի «*ՄքԿիլ*» համալսարանը: Այժմ, կը պաշտօնավարեմ մեծ ընկերութեան մը մէջ, Մոնրէալ: Շնորհակալութիւն Փօլիկլօթի...»:

ՇԱՆԹԱԼ ՍԱՅԷՂ

## ԲԱՆԱԿՈՒՄԻ 5ՐԴ ՕՐԸ

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ՇՐՋԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ ԿԸ ԾԱՆՕԹԱՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Է. բանակումին 5րդ օրը յատկանշուեցաւ Հայաստանի վանական շրջաններ այցելութեամբ: Բանակումի գլխաւոր երեք խմբակներէն առաջինը այցելեց Սեւանայ լիճ, ուր ծանօթացաւ համանուն թերակղզիին եւ Սեւանայ վանքին, ապա հաճելի ժամեր անցուց Սեւանի լճափին:*

*Երկրորդ խմբակը այցելեց Գառնի եւ Գեղարդ, ծանօթացաւ հայ հեթանոսական եկակի տաճարին եւ Գեղարդի պատմական վանքին:*

*Շրջապտոյտները անցան ընկերային հաճելի մթնոլորտի մէջ:*

*Բանակումի երրորդ խմբակը մնաց բանակավայրին մէջ եւ ունեցաւ սկաուտական դաստիարակչական ճոխ յայտագիր:*

*Երեկոյեան տեղի ունեցաւ դասախօսութիւն մը հայկական երաժշտական գործիքներուն մասին:*

*30 Յուլիսին, Հայաստանի մշակոյթի, երիտասարդական հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Ռոլանտ Շառոյեան ոսկեայ յուշամետալով պարգեւատրեց Միջազգային Սկաուտական Գրասենեակի ընդհանուր քարտուղար Ժաք Մորէօնը: Նախարարը նշեց, թէ սկաուտութեան նպատակներէն մէկն է խրախուսել երիտասարդական ազգային քաղաքականութիւնը:*

*Ժ. Մորէօն անդրադարձաւ պատանիներու կրթութեան, դաստիարակութեան հարցերուն, որոնք առկայ են բոլոր երկիրներուն մէջ եւ ըսաւ, թէ անոնց լուծումը կարելի է գտնել սկաուտութեան մէջ:*

---

## ԿԱՍՊԻՑ ԾՈՎԸ ԵԶԵՐՈՂ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

# ԻՐԱՆ ՊԱՏՐԱՍՏ՝ ՀԻՒՐԸՆԿԱԼԵԼՈՒ ՅԱՋՈՐԴ ԺՈՂՈՎԸ

ՄՈՍԿՈՒԱ, 31 (ՌՈՅԹԸՐԶ).- Ռուսիա Զորեքշաբթի օր յայտնած է, թէ Իրան պատրաստ է յառաջիկայ նախագահական վեհաժողովը հիւրընկալել քննարկելու համար Կասպից ծովու բաժնեկցութիւնը, զայն եզերող 5 պետութիւններուն միջեւ, Ատրիլին նման ժողովի մը ձախողութենէն ետք:

Առաջարկը պիտի կ'ունենար ծովը եզերող քանի մը երկիրներու կողմէ երկկողմանի համաձայնագիրներ ապահովելէ ետք, յայտնապէս Իրանը մեկուսացնելով:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութեան մը մէջ ըսած է, որ Իրանի արտաքին գործոց նախարարը՝ Քամալ Խարազի, 5 պետութիւններուն մասնագէտներու ըսած է, թէ Թեհրան պատրաստ է յաջորդ ժողովը հիւրընկալելու, առանց սակայն թուական ճշդելու:

Ազերի, իրանցի, ռուս, ղազախ եւ թուրքմէն մասնագէտներ Թեհրանի մէջ Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերուն ժողով մը գումարած են, ծովը բաժնելու եւ պատնամեակ մը պեւած բանավէճին վերջ փալու շուրջ ապագայ համաձայնութիւն մը քննարկելու համար:

---

## ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Յովհաննէս Մանճիկեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի՝ Լիբանանի Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութեան հետեւեալ նուիրատուութիւնները եղած են.

Տէր եւ տիկին Կարապետ Մանճիկեան 50,000 լ. ո., տէր եւ տիկին Յովիկ Աֆարեան 30,000 լ. ո., տէր եւ տիկին Պարգեւ Գերպապեան 30,000 լ. ո., տէր եւ տիկին Զոհրապ Սուլեան 30,000 լ. ո., տէր եւ տիկին Յակոբ Զ. Սուլեան 20,000 լ. ո., տիկին Ազնիւ Մանճիկեան եւ զաւակունք 30,000 լ. ո. եւ տիար Յովսէփ Ասարեան 20,000 լ. ո.:

---

## ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

●Պուրճ Համուտ, Կիլիկիա թաղ, Ա. յարկ՝ 3 սենեակ եւ 2րդ յարկ՝ 3 սենեակ: Դիմել՝ հեռ. 01-740668:

---

# ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՈՃԻՐ...

Շարունակուած 2րդ էջէն

նեցին, որ երէկ առաւօտեան ժամը 9:30ին, անտուկի պաշտօնեայ Աւմէտ Ալի Մանսուր, 46 տարեկան, մտաւ անտուկի շէնքը (ԵՈՒՆԵՍՔՕ շրջան, Խալէտ Ասմայս շէնք, 3րդ յարկ) եւ անտուկի պատասխանատուներուն հետ նախապէս իր ունեցած դրամական հարցերու եւ տարակարծութիւններու պատճառով, իրեն հետ բերած զէնքերով կուրօրէն կրակ բացաւ՝ սպաննելով ութ հոգի եւ վիրաւորելով հինգ ուրիշներ:

Հաղորդագրութիւնը աւելցուց, որ անմիջապէս դէպքին վայրը հասաւ Ն. Ա. ուժերու Պէյրութի ոստիկան ուժերու շրջուն խումբ մը, որ ձերբակալեց յանցագործը եւ գրաւեց անոր գործածած զէնքերը, իսկ հետաքննութիւնը կը շարունակուի պատկան դատական մարմիններու գլխաւորութեամբ:

### ՆԱԽԱՐԱՐ ՄՐԱՏ ԵՒ ՖՐԵՆՃԻԷ

Կրթութեան նախարար Ապտէլ Ռահիմ Մրատ այցելեց ոճիրին վայրը, ապա յայտնեց, որ ոճրագործը իր գործատեղիէն 18 միլիոն լ. ոսկիի փոխառութիւն մը ստացած էր եւ չէր կրցած վճարել զայն, նոյնիսկ իր ինքնաշարժը ծախելէ ետք:

«Այս վիճակը գրգռեց անոր ջիղերը եւ մղեց գործելու այս ոճիրը», ըսաւ ան:

Առողջապահութեան նախարար Սլէյման Ֆրենճիէ Պէյրութի բոլոր հիւանդանոցներէն պահանջեց ընդունիլ դէպքին հետեւանքով վնասուած բոլոր անձերը, ամբողջովին նախարարութեան հաշուոյն:

### ՄՐՐ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մրր ըսաւ, որ այսքան վայրագ ոճիրի մը միակ պատասխանը կրնայ ըլլալ դատական իշխանութեան կողմէ խիստ կեցուածք:

Նախարար Մրր նաեւ հաստատեց, որ երկրին մէջ զէնքերուն մատչելի մնալը լուրջ հարց մըն է, որուն ամբողջական եւ ընդհանուր լուծում պէտք է տալ եւ ո՛չ թէ մասնակի լուծում:

### ԺՍԸՐ

Արդարադատութեան նախարար Սամիր Ժսըր այցելեց դէպքին վայրը եւ մերժեց ոճիրին համայնքային դրդապատճառներու հաւանականութեան մասին հարցումի մը պատասխանել եւ «ամօթալի» համարեց նման մօտեցում:

### ՖԱՐԱՈՆ

Պետական նախարար Միշէլ Ֆարաոն ոճրագործին արարքը «խենթութիւն» որակեց եւ խօսեցաւ անոր պարտքերուն մասին:

### ՍԱԱՏԷ

Սեփական վարժարաններու ուսուցիչներու սենտիքայի նախագահ Ժորժ Սաատէ ըսաւ, որ ոճրագործին նեցուկ կանգնող կողմերը պէտք է յստակ գիտնան, որ հոս Թէլ Աւիւ չէ, ո՛չ ալ Արեւմտեան Երուսաղէմ, այլ՝ Պէյրութ, ԵՈՒՆԵՍՔՕի շրջանը, ուսումի եւ մշակոյթի կեդրոնը, ուր նման դէպք անընդունելի է:

### ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵՒ ԳՈՐԾԱԴՈՒԼ

Սեփական վարժարաններու ուսուցիչներու սենտիքայի կեդրոնական խորհուրդը, պետական վարժարաններու երկրորդական կարգերու ուսուցիչներու լիկայի վարչութիւնը, պետական նախակրթարաններու եւ միջնակարգերու լիկաներու կեդրոնական խորհուրդը, սենտիքայի շրջանային խորհուրդներու նախագահները եւ սենտիքայի փաստաբան Զիատ Պարուտ ոճիրէն ետք գումարեցին արտակարգ ժողով մը, ապա հրապարակեցին հաղորդագրութիւն մը, որուն մէջ դիտել տուին, որ «այս չարդը ամբողջ հայրենիքին դէմ ուղղուած ոճիր մըն է, եւ կրթական համակարգը հարուածելու կողքին, կը հարուածէ նաեւ ամբողջ հայրենիքին ապահովութիւնը»:

«Պետութիւնը պատասխանատու է երկրի ապահովական վիճակի վատթարացումին, եւ բնական չէ, որ պատերազմական զէնքերը մատչելի մնան բոլորին եւ չհաւաքուին», ըսաւ յայտարարութիւնը, ապահովական եւ դատական մարմիններէն պահանջելով, որ փութան քողազերծելու ոճիրին բոլոր ծալքերը եւ խստագոյն պատիժի ենթարկեն ոճրագործը:

Ժողովականները կը հաստատէին, որ սեփական վարժարաններու ուսուցիչներու հատուցումներու անտուկը պետութեան ամէնէն յաջող անկախ հաստատութիւններէն մէկը եղած է շնորհիւ իր տնօրէնութեան եւ պաշտօնէութեան ճիգերուն, կորս կը ղեկավարէր անտուկի հանգուցեալ տնօրէն Ռաշէլ Ռահմէ - Սաատէ, ըսաւ յայտարարութիւնը:

Ժողովին հաղորդագրութիւնը եկրափակեց յայտարարելով, որ անմեղ կոհերու սուգին համար եւ դատապարտելու համար ոճիրը, ժողովը կոչ կ'ուղղէ բոլոր մարմիններուն եւ կրթական միութիւններուն, ներառեալ պետական քննութեանց սրբագրութեան յանձնախումբերուն՝ աշխատանքը դադրեցնելու Հինգշաբթի օր, արտայայտելու համար իրենց ցաւն ու ցասումը, իսկ ժողովականները ցաւակցութիւններ պիտի ընդունին Ուրբաթ եւ Շաբաթ օրերը կէսօրէ ետք ժամը 4:00էն 7:00, սենտիքայի կեդրոնատեղիէն ներս:

### ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ ԱԼԻՔ

Գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէ խստիւ դատապարտեց անարգ ոճիրը եւ դատական իշխանութենէն պահանջեց խստագոյն պատիժի ենթարկել ոճրագործը եւ ոչ մէկ պատճառով գթալ կամ թոյլ գտնուիլ անոր նկատմամբ:

Երեսփոխան Մարուան Ֆարէս ըսաւ, որ բաւարար չէ դատապարտել նման արարք, այլ պէտք է խստիւ պատժել յանցագործը: Ան հարց տուաւ, որ այս ոճրագործը ի՞նչպէս կրցաւ այդ զէնքերը մտցնել պետական հաստատութիւն:

Երեսփոխան Փիեռ Ժեմայէլ դատապարտեց ոճիրը, իսկ երեսփոխան Ղինուա Ժալլուլ ըսաւ, որ մարդկային խղճին համար անընդունելի է նման սոսկալի ոճիր:

Լիբանանեան համալսարանի լիաժամ դասախօսներու լիկայի կեդրոնական խորհուրդի նախագահ դոկտ. Շարպէլ Քֆուրի լիկայի անունով դատապարտեց այս բարբարոս արարքը, պետական պատասխանատուներէն պահանջելով դիմել պետական պաշտօնէութիւնն ու անմեղ քաղաքացիները պաշտպանող միջոցառումներու:

Փաղանգաւոր Կուսակցութիւնը խիստ ոճով դատապարտեց այս «սարսափելի չարդը» եւ պահանջեց բացայայտել ոճիրին բոլոր դրդապատճառներն ու մանրամասնութիւնները, ամէնէն խիստ պատիժին ենթարկելով ոճրագործը:

«Սպաննուած պաշտօնեաները պարտականութեան ճամբուն վրայ կոհուած նահատակներ են», ըսաւ կուսակցութեան յայտարարութիւնը, պահանջելով ամրապնդել օրէնքն ու ապահովութիւնը:

---

## Ի՞ՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

*31 Յուլիսի տեղական մամուլը յուզող գլխաւոր հարցը կը մնայ բջիջային հեռաձայնի թղթածրարը եւ նախարարաց խորհուրդի վաղուան նիստէն առաջ համաձայնութեան մը յանգելու ուղղութեամբ թափուող բազմակողմանի ճիգերը:*

*Բջիջայինի հարցով «Նահար» գրած է. «Ամերիկայի դեսպանը եւս մտաւ բջիջայինի հարցին մէջ եւ ըսաւ, որ ամերիկեան ընկերութիւններ կը փափաքին այս մարզին մէջ ներդրումներ կատարել: Նեպիհ Պըրրի այսօր վերջին փորձ մը պիտի ընէ, որպէսզի կառավարութեան վաղուան նիստը չյետաձգուի»:*

*«Տիար»ի համաձայն, վարչապետ Հարիրի ետդարձ մը կատարեց բջիջայինի երկու ընկերութիւնները պաշտպանելու իր կեցուածքէն՝ հանրային կարծիքին ճնշումին տակ: Այսօր ժամը 10:00ին նախարարներ պիտի հաւաքուին վարչապետին մօտ՝ թղթածրարին վերջնական լուծումը ճշդելու համար, նշած է թերթը:*

*«Լիուա» օրաթերթը այս մասին գրած է, թէ բջիջայինի հարցով լուծման ճիգերը եւ քաղաքական տագնապի մը պայթումը նոյնքան հաւանական են. կառավարութեան վաղուան նիստը կրնայ յետաձգուիլ՝ եթէ մինչ այդ համաձայնութիւն մը չգոյանայ:*

*«Քիֆահ Արապի» նշած է, թէ բազմակողմանի շփումները այսօր կը շարունակուին եւ բջիջայինի հարցը կ'ընթանայ դէպի յարմար լուծում. նախարար Արիտի կ'ըսէ, որ խորհրդակցութիւնները այլեւս սահմանափակուած են թեքնիք հարցերով:*

*Ըստ «Պայրաք»ի, նախագահ Լահուտ կառչած կը մնայ թիւ 393 օրէնքի տառացի գործադրութեան եւ բջիջայինի մուտքերը պետութեան գանձ փոխանցուելուն. համախոհական տարակի մը փնտռտուքը կը շարունակուի:*

*«Սաֆիր» գրած է. «Լահուտ եւ Հարիրի կը մնան իրենց դիրքերուն վրայ եւ միջնորդութեան վերջին փորձ մը կը կատարուի այսօր: Նեպիհ Պըրրիի առաջարկած լուծման համաձայն, 31 Օգոստոսին երկու ընկերութիւններու ներկայ պայմանագիրը վերջ կը գտնէ եւ մուտքերը կը փոխանցուին պետութեան:*

*«Անուար»ի համաձայն, վարչապետ Հարիրիի համակիր նախարարները կ'ակնարկեն հարցը կառավարութեան նիստին ընթացքին քուէարկութեամբ վճռելու կարելիութեան, իսկ Նեպիհ Պըրրի կը շարունակէ լուծում մը գտնելու իր ճիգերը:*

*«Մուսթաքպալ» գրած է, թէ վարչապետ Հարիրի կառչած կը մնայ սեփականաշնորհման գործընթացը ապահով կերպով շարունակելու քայլերուն, մինչ համախոհութեան մը յանգելու ճիգերը կը շարունակուին:*

*Այս գլխաւոր նիւթին կողքին թերթերը լուսարձակի տակ առած են նաեւ այն որոշումը, ըստ որուն, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը 6 ամսուան համար միաձայնութեամբ վերանորոգած է Հարաւի մէջ գործող ՄԱԿի ուժերու գործունէութեան ժամկէտը: Ըստ մամուլին, Ամերիկայի պաշտպանութեան նախարարը նախագահ Պուշի յայտարարութիւնը յստակացնելով կը ճշդէ, որ Ամերիկան կ'ուզէ Սատտամի վարչակարգը տապալել եւ ոչ թէ Իրանի կամ Հիւսիսային Քորէայի վարչակարգերը:*

*Թերթերը նշած են, թէ Ճորճ Պուշ պիտի կազմէ յատուկ յանձնաժողով մը, որ պիտի ուսումնասիրէ թէ աշխարհը ինչո՞ւ կ'ատէ Ամերիկան:*

*Պաղեստինեան իրադարձութիւններուն անդրադառնալով լիբանանեան մամուլը գրած է, թէ անձնասպանական գործողութեան մը ընթացքին 2 իսրայէլացիներ սպաննուեցան եւ 9 ուրիշներ վիրաւորուեցան: Ըստ թերթերուն, «Համաս» կը մերժէ որեւէ զինադադար եւ պաղեստինեան գործողութիւնները իրենց նախկին թափը կը ստանան:*

*Ըստ «Նահար»ի, Իսրայէլ կը նախատեսէ անձնասպանական 60 նոր գործողութիւններ:*

*Լիբանանեան ներքին կեանքին մասին թերթերը հաղորդած են, թէ զինուորական աւագ քննիչ դատախազ Ռիատ Թալիհ հարաւի մէջ երեք բանակայիններու սպանութեան թղթածրարին առնչութեամբ Պատրի Ուալիտ Համատէի (Ապու Օպէյտայի), Սուհէր Մահմուտ Սայիտի եւ Նայիֆ Քանուանի դէմ մահապատիժի պահանջ ներկայացուցած է:*

*«Նահար» օրաթերթը յատուկ ուսումնասիրութիւն մը կատարած է Լիբանանի կրթական կեանքին, ծրագիրին եւ կրթութեան նախարարութեան նոր ձեռնարկներուն մասին, ըստ որոնց, կը նախատեսուի նոր դպրոց մը կառուցել կամ հին մը վերանորոգել իւրաքանչիւր շրջանի մէջ:*

*Մշակութային բնագաւառին մէջ թերթերը անդրադարձած են բանաստեղծ Ռիատ Ֆախուրիի մահուան:*




ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

## ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ՓՈՐՁԷ ՀԱՄՈԶԵԼ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ, ՈՐ ԻՐԱՔԻ ՎՐԱՅ ՉՅԱՐՁԱԿԻ

Մ. Նահանգներ տակաւին որոշում չեն տուած Իրաքի վրայ յարձակումի մը ձեռնարկելու գծով եւ օժանդակութեան որեւէ առաջարկ չեն տուած Թուրքիոյ, ըսած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը երէկ:

Նախագահ Ճորճ Պուշի վարչակարգը գաղտնի չի պահեր իր վճռակամութիւնը՝ Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնը տապալելու, հաւաքական քանդումի զէնքերու ենթադրեալ մշակումին համար: Զինուորական նման որեւէ քայլ անպայման Թուրքիոյ գործակցութեան կարիքը պիտի ունենայ:

Անզարա դիւանագիտական բանուկ երթեւեկի թատերաբեմ դարձած է Երեքշաբթի օր: Թուրքիոյ քաղաքական եւ զինուորական ղեկավարութիւնը նաեւ ժողով գումարած է՝ քննարկելու համար շրջանային հարցեր:

Մ. Նահանգներու դեսպանը Երեքշաբթի օր երկու անգամ այցելած է արտաքին գործոց նախարարութիւն:

Վարչապետ Պիւլէնթ Էճեւիթ երէկ յայտնած է, որ Թուրքիա կը փորձէ համոզել Ուաշինկթընը, որ Իրաքի վրայ յարձակում չգործէ:

Թուրքիա հրապարակաւ ընդդիմութիւն յայտնած է, Իրաքի վրայ յարձակումի մը, այն մտավախութեամբ, որ տագնապը կրնայ սահմաններէն Թուրքիա թափանցել եւ իր հարաւարեւելեան շրջանին մէջ խռովութիւններ հրահրել:

### ԻՐԱՔ Կ՛ՈՂՋՈՒՆԷ ԷՔԷՈՒՍԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Միւս կողմէ, Իրաք երէկ ողջունած է ՄԱԿի զէնքերու նախկին քննիչ Ռոլֆ Էքէուսի յայտարարութիւնները, ուր ան կ՛ամբաստանէ Մ. Նահանգները Իրաքի մէջ ՄԱԿի զէնքերու խմբակները շահագործելու յանցանքով, ըսելով, որ ան կը հաստատէ Պաղտատի տեսակէտը, թէ կարգ մը քննիչներ լրտեսներ են:

Էքէուս այս շաբաթ յայտնած է, որ Մ. Նահանգներ եւ այլ պետութիւններ շահագործած են ՄԱԿի խմբակները իրենց քաղաքական սեփական նպատակներուն համար, նշելով յատկապէս նախագահ Սատտամ Հիւսէյնի շարժումներու հետապնդումը:

Շուէտացի դիւանագէտը, որ 1991-1997 Իրաքի զէնքերու ծրագիրին առաջին քննութիւնները գլխաւորած էր, ըսած է, թէ երբեմն կը ստեղծուէին տագնապներ, որոնք կրնային զինուորական գործողութեան հիմ ծառայել:

(ՌՈՅԹԸՐԶ)

## ԻՐԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՊԱՏՐԱՍՏ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՒԱՆԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ ՄԸ ԴԻՄԱԳՐԱՒԵԼՈՒ

ԹԵՀՐԱՆ, 31 (ՌՈՅԹԸՐԶ).– Իրանի սպայակոյտի պետ զօրավար Հասան Ֆիրուզապատի Չորեքշաբթի օր յայտնած է, թէ իր ուժերուն հրահանգուած է պատրաստութիւն տեսնել՝ Մ. Նահանգներու կողմէ հաւանական յարձակումի մը գծով:

Ան տեղացի թղթակիցներու ըսած է, որ Իրանի ապահովութեան գծով որոշում կայացնող գերագոյն մարմինը վերջերս քննարկած է «թշնամի սպառնալիքներ»:

Ֆիրուզապատի յայտնած է, որ երկրին հոգեւոր գերագոյն պետ եւ վինեալ ուժերու ընդհանուր հրամանատար Այաթոլլա Ալի Խամենէի բանակին եւ Յեղափոխական Պահակագունդին ըսած է, որ պատրաստուին «գլխաւոր երկու պարտականութիւններու». «Առաջինը՝ մեր վէնքերը պատրաստել՝ կանխարգիլման նպատակներու, երկրորդը՝ եթէ բան մը պատահի, պէտք է կարենանք պատժել յարձակումի աղբիւրը»:

Պետական պատկերասփիւռը հաղորդած է, որ անոր խօսքերը հակադարձութիւն էին «ամերիկեան նորագոյն սպառնալիքներուն»:

Ուաշինկթըն Իրանը, Իրաքը եւ Հիւսիսային Քորէան «չարութեան առանցք»ի մը անդամները կը նկատէ, Թեհրանը ամբաստանելով ահաբեկչութեան զօրավիգ կանգնելու եւ հաւաքական քանդումի վէնքեր հետապնդելու յանցանքով:

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՊԱՅԹՈՒՄ. 7 ԶՈՀ, ԱՒԵԼԻ ՔԱՆ 80 ՎԻՐԱՒՈՐ



Արեւելեան Երուսաղէմի «Եբրայական համալսարան»ի ճաշարանին մէջ երէկ ռումբի մը պայթումը խլեց եօթը կեանք եւ աւելի քան 80 վիրաւոր: Ռումբը պայթեցաւ կէսօրուան դադարին: Համալսարանին մէջ կ'ուսանին բազմաթիւ օտարներ. սպաննուողներուն ինքնութեան մասին ցարդ ոչինչ կ'ըսուի:

Հակասական տեղեկութիւններ հաղորդուեցան պայթումին պատճառներուն մասին: Կարգ մը աղբիւրներ ըսին, որ պայթումը անձնասպանական գործողութիւն մըն է, իսկ այլ աղբիւրներ, որոնց կարգին՝ «*Ռոյթըրզ*», հաղորդեցին, որ պայթումը ականուած ռումբի մը հետեւանքով է. ռումբը կետեղուած է պայուսակի մը մէջ: Իսրայէլեան ոստիկանութիւնը եւս կու տայ այս բացատրութիւնը:

Համասի զինուորական թեւը՝ «ԱլՔասսամ» հաղորդագրութեամբ մը ստանձնեց գործողութեան պատասխանատուութիւնը, ընդգծելով, որ անիկա Կազայի մէջ Իսրայէլի գործած ջարդին վրէժը լուծելու համար է:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ դատապարտեց արարքը, զայն նկատելով պաղեստինեան շահերուն վնասող քայլ մը:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ, Մոսկուա եւ եւրոպական երկիրներ դատապարտեցին արարքը, խաղաղութեան գործընթացին մեծապէս վնասող իբրեւ քայլ:

Միւս կողմէ, նախքան պայթումը, իսրայէլեան կառավարութիւնը վարչապետ Արիէլ Շարոնի գլխաւորութեամբ գումարեց արտակարգ ժողով մը, եւ որոշեց շարունակել պատժական իր քաղաքականութիւնը անձնասպանական գործողութեանց հեղինակներու հարազատներուն ու ընտանիքներուն նկատմամբ, կանոնք արտաքսելով Այսրյորդանանէն:

ՉԵՉԷՆ ՑԻՆԵԱԼՆԵՐՈՒ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

## ՌՈՒՍԻԱ - ՎՐԱՍՏԱՆ ԲԱՆԱՎԷՃԸ ԿԸ ՍԱՍՏԿԱՆԱՅ

*ՄՈՍԿՈՒԱ, 31 (ՌՈՅԹԸՐԶ).- Ռուսիա Չորեքշաբթի օր Վրաստանը ամբաստանած է յարձակում գործած ըլլալու յանցանքով, յայտնելով, որ անիկա չեչէն ըմբոստներու արտօնած է Ռուսիա թափանցել եւ իր ուժերուն վրայ յարձակիլ:*

*Մոսկուայի կողմէ խիստ ոճով շարք մը յայտարարութիւններ կը յաջորդէին Չեչենիոյ մէջ տեղի ունեցած քանի մը օրուան բախումներու:*

*Ըստ լրատու աղբիւրներու, բախումները արձանագրուած են ռուսական ուժերուն եւ Վրաստանէն Չեչենիա թափանցած չեչէն ըմբոստներու միջեւ:*

*Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով Պրունայի մէջ տեղի ունեցած ժողովի մը ընթացքին Մ. Նահանգներու իր պաշտօնակիցին՝ Քոլին Փաուըլի յայտնած է, թէ Չեչենիա թափանցումը նման է Քաշմիրի մէջ վինեալ յարձակումներու, Հնդկաստանի եւ Փաքիստանի կողմէ պահանջուած հողամասերու վրայ:*

*Իվանով թղթակիցներու ըսած է, որ երկու վայրերուն մէջ «անդրազգային ահաբեկիչներ շրջանին մէջ կացութիւնը կ'ապակայունացնեն»:*

*«Շեշտեցի, որ դրացի երկրէ մը միջազգային ահաբեկիչներու կողմէ նման գործունէութիւն միմիայն յարձակում կրնայ նկատուիլ», ըսած է ան:*

*«Եթէ Վրաստանի ղեկավարութիւնը կարելիութիւնը չունի այս հարցը լուծելու, ապա միջազգային համայնքը քայլերու պէտք է դիմէ», յայտնած է Իվանով:*

*Ռուսական լրատու աղբիւրներ, մէջբերելով բանակը, ըսած են, թէ Չեչենիոյ մէջ ուժեր ետ մղած են 60 ըմբոստ հաշուող խումբը, սպաննելով անոնցմէ 28ը:*

*Ըստ ըմբոստներու համացանցի կայքին, այդ թիւը սխալ է եւ քանի մը օր տեւած բախումներուն 39 զինուոր սպաննուած է:*

### ՌՈՒՍԱԿԱՆ ԶԱՅՐՈՅԹ

*Ռուսիա պաշտօնապէս շարք մը յայտարարութիւններ կատարած է Վրաստանը ամբաստանելով, թէ որեւէ քայլի չի դիմեր ահաբեկիչներուն դէմ, որոնք երկար ատենէ ի վեր ապաստանած են Փանքիսի կիրճին մէջ:*

*Կրեմլինի մէկ ժողովին, Ռուսիոյ սահմանապահ ուժերու հրամանատար զօրավար Քոնսթանթին Թոցքի նախագահ Վլատիմիր Փութինի յայտնած է, թէ իր կարծիքով Վրաստան նախապէս տեղեակ եղած է թափանցումին մասին:*

*Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութիւնը ամբաստանած է Վրաստանը՝ «ահաբեկիչները հանդարտեցնելու, անոնց հետ բարեկամ մնալու քաղաքականութեան մը հետեւելու»:*

*Նախարարութիւնը յայտնած է, որ Վրաստանի դեսպան Զուրապ Ապաշիձէ կանչուած է եւ անոր պաշտօնական զանգատ ներկայացուած:*

*Ապաշիձէ հարցազրոյցի մը ընթացքին ըսած է, որ Թիֆլիս չէ հաստատած, թէ ըմբոստները Վրաստանէն մտած են Չեչենիա:*




ՊՐՈՒՆԱՅԻ ՄԷՋ

## ՓԱՈՒԸԼ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՑԻՆ ՀԵՏ

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ երէկ տեսակցութիւն մը ունեցած է Հիւսիսային Քորէայի իր պաշտօնակիցին հետ, մինչ միջքորէական լարուածութիւնը մեղմացնելու ճիգերը տիրական էին Ասիա – Խաղաղական ապահովութեան ժողովին:

Պրունայի մէջ տեղի ունեցած կարճատեւ, անպաշտօն տեսակցութիւնը երկու երկիրներուն միջեւ ամէնէն բարձրաստիճան մակարդակի կապն էր՝ 2001էն ի վեր, երբ նախագահ Ճորճ Պուշ իր պաշտօնը ստանձնած էր եւ Հիւսիսային Քորէայի հետ դէպի մերձեցում ամերիկեան քայլերը սանձած:

Անցեալ Յունուարին, Պուշ յայտնած էր, թէ Հիւսիսային Քորէա «չարութեան առանցքի մը» մաս կը կազմէ:

ԱՍԻԱՆի Շրջանային Ֆորումի 23 անդամները երէկ սկզբունքով պէտք է կեդրոնանային ահաբեկչական ցանցերը քանդելու ճիգերուն վրայ: Մասնակցող երկիրները հաղորդագրութեան մը մէջ խոստացած են քայլերու դիմել՝ պայքարելու համար ահաբեկչական ցանցերուն դէմ:

Փաուըլ հիւսիսային քորէացի իր պաշտօնակիցին հետ 15 վայրկեան տեւողութեամբ տեսակցութիւն մը ունեցած է՝ ժողովին սկիզբը: Փաուըլ թղթակիցներու ըսած է, թէ «լաւ տեսակցութիւն մըն էր» եւ տիալոկը պէտք է շարունակել: Իսկ քորէացի դիւանագէտը՝ Փէք Նամ–Սուն ըսած է, թէ երկու կողմերը համաձայնած են, թէ տեսակցութիւնները պէտք չէ դադրին:

(ՌՈՅԹԸՐԶ)

## ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ...

Շարունակուած 9րդ էջէն

3 վայրկեան 37" 35 արդիւնք մը: Արծաթ մետալին տիրացաւ քենիացի Ուիլիըմ Շըրշիր (3' 37" 70), իսկ պրոնզ մետալին՝ աւստրալիացի Եուսէֆ Ապտի (3' 37" 77):

Տղոց 110 մեթր արգելարշաւի մրցումներուն, հարաւային ափրիկեցի Շոն Պոընզ արձանագրեց լաւագոյն արդիւնքը՝ 13" 35 եւ շահեցաւ ոսկի մետալը: Քոլին Ճէքսըն (Կալէս) շահեցաւ արծաթ մետալը (13" 39), իսկ Մօրիս Ուիկնըլ (Ժամայքա)՝ պրոնզ մետալը (13" 62):

Տղոց 4x100 մեթր ազատ լողի մրցումներուն ոսկի մետալին տիրացաւ Աւստրալիա, որ արձանագրեց 3 վայրկեան 16" 42 արդիւնք մը: Արծաթ մետալին տիրացաւ Հարաւային Ափրիկէ (3' 19" 39): Աւստրալիոյ մարզիկներն էին՝ Էշլի Քալիւս, Թոտ Փիրսըն, Կրէնթ Հէքըթ եւ Իան Թորփ: Հարաւային Ափրիկէի մարզիկներն էին՝ Ռոլանտ Շէօմըն, Հենտրիք Օտենտաալ, Լինտըն Ֆերնս եւ Ռիք Նիթլինկ: Վերջապէս, Քանատայի մարզիկներն էին՝ Պրէնթ Հէյտըն, Քրէյկ Հաչիսըն, Մէթիու Ռոզ եւ Ռիք Սէյ:

Աղջկանց 200 մեթր ազատ լողի մրցումներուն ոսկի մետալը շահեցաւ Քըրսթի Լէկ Քովենթրի (Զիմպապուէ), որ արձանագրեց 2 վայրկեան 14" 53 արդիւնք մը: Արծաթ մետալը շահեցաւ աւստրալիացի Ճենիֆըր Ռէյլի, արձանագրելով 2' 14" 99 արդիւնք մը, իսկ պրոնզ մետալին տիրացողը եղաւ քանատացի Մարիան Լիմփէր, որ արձանագրեց 2' 15" 07 արդիւնք մը:

Աղջկանց բարձրութիւն ցատկելու մրցումներուն, Հեսթըր Քլոյէ (Հարաւային Ափրիկէ) շահեցաւ ոսկի մետալը 1, 96 մեթր արդիւնք մը արձանագրելէ ետք: Արծաթ մետալին տիրացաւ անգլիացի Սիւզըն Ճոնզ (1,90 մ.), իսկ պրոնզ մետալին՝ քանատացի Նիքոլ Ֆորեսթըր (1,87 մ.):

Տղոց ձողով բարձրութիւն ցատկելու մէջ, Հարաւային Ափրիկէ այլ ոսկի մետալ մըն ալ շահեցաւ, շնորհիւ Օքերթ Պրիթսի, որ արձանագրեց 5,75 մեթր արդիւնք մը: Արծաթ մետալին տիրացաւ աւստրալիացի Փօլ Պըրճիս (5,70 մ.), իսկ պրոնզ մետալին՝ Տոմինիք Ճոնսըն (Սէնթ Լուչիա), որ արձանագրեց 5,60 մեթր արդիւնք մը:

Աղջկանց 10 հազար վազքի մրցումներուն, ոսկի եւ արծաթ մետալները շահեցան քենիացիք, իսկ պրոնզ մետալին տիրացաւ Աւստրալիա: Սալինա Քոսկէ արձանագրեց 31 վայրկեան 27" 83 արդիւնք մը, իսկ Սիւզան Շեփքեմէ՝ 31' 32" 04 արդիւնք մը: Պրոնզ մետալը վիճակուեցաւ Սիւզի Փաուըլի, որ արձանագրեց 31' 32" 20 արդիւնք մը:

Տղոց մէկ քայլ ոստումի մրցումներուն, անգլիացի Նէյթըն Մորկըն տիրացաւ ոսկի մետալին, արձանագրելով 8,02 մեթր արդիւնք մը: Արծաթ մետալին տիրացաւ Կապըլ Կարէնամոթցէ (Պոցուանա), որ արձանագրեց, 7,91 մ. արդիւնք մը, իսկ պրոնզ մետալին տիրացաւ Քարիմ Սթրիթ–Թոմսըն (Քէյմըն Կղզիներ), որ արձանագրեց 7,89 մ. արդիւնք մը:

Տղոց թենիսի աւարտական մրցումին Անգլիա 3–0 արդիւնքով պարտութեան մատնեց Նիկերիան, իսկ աղջկանց աւարտականին, Սինկափուր՝ Աւստրալիան, 3–0 արդիւնքով: